ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ 1913 թվականը հույսերի ու ակնկալիքների տարի էր: Հայ ազգային պատվիրակությունը ժամանակի ամենահանրաճանաչ հայի՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ գտնվում էր Եվրոպայում և եռանդուն ջանքեր գործադրում արևմտահայության կյանքի, պատվի ու ինչքի, ապահովության հարցը լուծելու համար: Հայության բոլոր հատվածների ու խավերի հայացքը սևեռված էր դեպի Պողոս Նուբարը, որի հաջող գործունեության հետ էին կապված լավագույն ապագայի ծրագրերը:

Կատարելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հանձնարարականները՝ ազգային պատվիրակությունն աշխատեց առաջին հերթին հայանպաստ տրամադրություններ ստեղծել Եվրոպայի հասարակական-քաղաքական ու կառավարող շրջաններում: Պողոս Նուբար փաշան համոզված էր, որ հասարակական կարծիքը կարող է ազդու լծակ լինել Հայկական հարցում եվրոպական երկրների միակամությունը հաստատելու գործում: Այդ նպատակով ազգային պատվիրակությունը կազմակերպչական մեծածավալ աշխատանքներ կատարեց Եվրոպայում գործող հայկական կոմիտեների աշխատանքների աշխուժացման, ինչպես նաև նոր կոմիտեների ու մասնախմբերի ստեղծման գործում: 1913 թ. ընթացքում այդպիսի կոմիտեներ ստեղծվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրո-Հունգարիայում, Ռուսաստանում, Շվեյցարիայում և այլուր: Հայկական կոմիտեների կազմում ընդգրկվում էին հայասիրական տրամադրություններ ունեցող եկեղեցական, հասարակական ու կուսակցական նշանավոր գործիչներ, գիտության ու մշակույթի երևելի դեմքեր, հայտնի մտավորականներ, դիվանագետներ, անգամ, խորհրդարանների պատգամավորներ և այլք: Կոմիտեները բոլոր թույլատրելի միջոցներն օգտագործում էին Հայկական հարցի արդար լուծումը քարոզելու, հայասիրական տրամադրությունները մշտարթուն պահելու, եվրոպական կառավարող շրջանների հետ սերտ կապեր հաստատելու համար: Կոմիտեների անդամները մամուլում հանդես էին գալիս հայանպաստ հոդվածներով ու հարցազրույցներով, առանձին մենագրություններով, որտեղ աշխատում էին ներկայացնել Օսմանյան կայսրությունում արևմտահայության ծանր կացությունը, Հայկական հարցի պատմությունը, թուրքական կառավարության կեղծ խոստումները, եվրոպական դիվանագիտության շահամոլ ձգտումները և, երբեմն, առաջադրում էին Հայ դատի լուծման իրենց տարբերակները: Հայկական կոմիտեների ջանքերով հաճախ կազմակերպվում էին դասախոսություններ ու զեկուցումներ, որոնց որպես կանոն ներկա էին լինում հայ ազգային պատվիրակության անդամները: Նմանատիպ միջոցառումները կազմակերպվում էին գերազանցապես Պողոս Նուբար փաշայի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Հասարակական ու գիտական այլևայլ գործիչներից բացի այդ համաժողովներին մասնակցում էին նաև պետական բարձրաստիճան այրեր:

Ահա այդպիսի ներկայացուցչական խոշոր համաժողովներից էր 1913 թ. ապրիլի 25-ին Լոնդոնի հայկական կոմիտեի ջանքերով կազմակերպված միջոցառումը, որը տեղի ունեցավ անգլիական պառլամենտի դահլիճներից մեկում: Նրա աշխատանքներին մասնակցում էին պատգամավորներ, Լոնդոնի, Մանչեստրի, Փարիզի, Բեռլինի և Շվեյցարիայի հայկական կոմիտեների ներկայացուցիչներ: Համաժողովում ազգային պատվիրակության անունից հանդես եկան Պողոս Նուբար փաշան և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին տեսուչ, իրավաբան Հարություն Մոսդիչյանը:

Իր ելույթում Պողոս Նուբար փաշան, մանրամասն ներկայացնելով պատվիրակության մշակած բարենորոգումների ազգային ծրագրի հոդվածները, մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ դրանք բավական չափավոր են և հիմնված են Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի և տերությունների կողմից Բ. Դռանը 1895թ. մայիսին ներկայացված հուշագրի վրա: Համաժողովում ելույթ ունեցան նաև անգլիական խորհրդարանի պատգամավորներ Աննան Բրայսը և Թ. Բ. Օ'Քոննորը, Բեռլինի հայկական կոմիտեից դոկտոր Յոհաննես Լեփսիուսը, Փարիզի կոմիտեից՝ Ռոբեր դը Քեն, Շվեյցարիայի կոմիտեից՝ Լեոպոլդ Ֆավրը և այլք:

Համաժողովում ընդունվեց հայկական բարենորոգումների մի նախագիծ, որի հիմքում դրված էին ազգային պատվիրակության առաջարկները: Ըստ համաժողովի մշակած նախագծի հայկական բարենորոգումների անկյունաքարերն էին՝ սուլթանի կողմից և տերությունների համաձայնությամբ՝ եվրոպացի գլխավոր կոմիսարի նշանակումը, մշտապես գործող հանձնաժողովի միջոցով տերությունների վերահսկողությունը, հավասար թվով՝ մահմեդականներից և քրիստոնյաներից ընտրված նահանգային գլխավոր ժողովի հիմնումը, հայ բնակչությունից բռնագրավված հողերի փոխհատուցումը, քրդերի և քոչվոր ցեղերի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմի ստեղծումը, Բալկաններից Արևմտյան Հայաստան գաղթող մահմեդական բնակչության խնդիրը, տեղական ոստիկանության հիմնումը, դատական, ֆինանսական և այլ կարգի բարենորոգումները[1]: Հետաքրքիր է, որ համաժողովը նախատեսում էր իր ընդունած որոշումները ներկայացնել Փարիզում գումարվող միջազգային ֆինանսական հանձնաժողովին և տերությունների արտգործնախարարություններին: Հայկական կոմիտեները ցանկանում էին ազդել իրենց երկրների կառավարությունների վրա՝ հայկական բարենորոգումների խնդրին շուտափույթ լուծում տալու համար: Իսկ միջազգային ֆինանսական հանձնաժողովը Օսմանյան կայսրությանը հատկացվող նոր փոխառությունների ու վարկերի տրամադրումը կարող էր պայմանավորել հայկական բարենորոգումների ընդունումով:

Համաժողովը ողջունեց տարբեր երկրներում հայկական կոմիտեների հիմնումը և կոչ արեց աշխուժացնել պետական ու հասարակական շրջաններում ի շահ Հայ դատի տարվող քարոզչական աշխատանքները: Այս առթիվ Անգլիայի հայկական կոմիտեի անդամ Նոել Բուքստոնի առաջարկությամբ ընդունված որոշման մեջ ասվում էր՝ համաժողովի մասնակիցները «պարտաւորւում են պահպանել իրանց երկրներում կազմուած կոմիտէները՝ իրազեկ պահելու համար հասարակական կարծիքը հայկական հարցի մասին և գործելու համար իրանց կառավարութիւնների մօտ անընդհատ և յարատեւ ջանքերով ի նպաստ

1 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀԱԱ), ֆ.57, ց.5, գ.34, թ.23:

ռեֆորմների, որ պահանջում են տեղական կարիքները եւ անհրաժեշտ են Օսմանեան կայսրութեան ամբողջութեան պահպանման համար»[2]:

Ուշագրավ է, որ այս համաժողովը տեղի ունեցավ հենց Լոնդոնում, որտեղ ընթանում էին տերությունների բազմակողմ հանդիպումներ Բալկանյան առաջին պատերազմում հակամարտող կողմերի միջեւ հաշտության եզրեր գտնելու համար: Պարզապես ռուսաց դիվանագիտության ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորներից ելնելով էր, որ Պողոս Նուբարը պաշտոնապես չդիմեց վեհաժողովին: Փոխարենը համաժողովը մեծ դեր խաղաց Անգլիայում հայանպաստ տրամադրություններ ստեղծելու գործում: Լոնդոնի համաժողովի անմիջական արդյունք պետք է համարել 1913 թ մայիսի 18-ին Մեծ Բրիտանիայի խորհրդարանում պատգամավորներ Ա. Բրայսի եւ Թ. Բ. Օ՛Քոննորի, արտաքին գործերի նախարարի խորհրդական Էքլենտի հայանպաստ ելույթները: Անգլիացի խորհրդարանականները կառավարությունից պահանջում էին նեցուկ լինել Հայ դատին եւ միջոցներ ձեռնարկել, որպեսզի թուրքական կառավարությունն իրագործի հայկական բարենորոգումները[3]:

Ազգային պատվիրակության ստեղծումը եւ գործունեությունը թշնամանքով ընդունվեց երիտթուրքական կառավարության կողմից: Խեղաթյուրելով ազգային պատվիրակության նպատակների ու ձեռնարկած քայլերի էությունը՝ երիտթուրքերը հայտարարում էին, թե Պողոս Նուբար փաշան հայերի համար ցանկանում է բացառիկ արտոնություններ եւ առանձնաշնորհումներ ձեռք բերել: Այս առումով ուշագրավ է Ահմեդ Աղաեւի Կ. Պոլսի «Հագիգաթ» թերթում տպագրած հոդվածը, որտեղ հեղինակը հայտարարում էր, թե «Լոնդոնի մէջ կարգ մը պատուիրակներ կ՛շրջին եւ կ՛պատրաստեն կարգ մը յիշատակագիրներ, ներկայացնելու համար դեսպանաժողովին: Ասոնք կարգ մը իրաւունքներ եւ առանձնաշնորհումներ կ՛պահանջեն Թուրքիա բնակող կարգ մը ցեղերու համար եւ, բնականաբար, այս մարմիններն իրենց նպատակին հասնելու համար կ՛աշխատեն տեղական մամուլն եւ հանրային կարծիքն շահիլ, եւ այս առթիւ Օսմանեան կառավարութեան դէմ կարգ մը բարբաջանքներ կ՛հրատարակեն»[4]:

Կեղծելով իրականությունը երիտթուրքերը հայերի նկատմամբ թշնամության նոր որակ էին սերմանում, քանի որ մահմեդական մոլեռանդ ամբոխի աչքին հայ ազգաբնակչությունը ներկայացվում էր որպես անջատողական ու արտոնյալ իրավունքներ պահանջող: Ու եթե սրան գումարենք Բալկանյան առաջին պատերազմում քրիստոնյաների հաղթանակի հետեւանքով Բալկաններից Արեւմտյան Հայաստան գաղթած մահմեդականների վրեժխնդրությունը, ապա պարզ կդառնա երիտթուրքական կառավարության հակահայ դիրքավորության բուն նպատակը: Հաշվի առնելով այս հանգամանքը Պողոս Նուբար փաշան իր հրապարակային ելույթներում հաճախ ընդգծում էր, որ բարենորոգումները նույնքան անհրաժեշտ են մահմեդականներին, որքան քրիստոնյաներին, որ հայերն օսմանյան «հայրենիքը» մասնատելու ձգտումներ չունեն եւ այլն: 1913 թ մայիսի 15-ին անգլիական «Times» թերթի խմբագրապետին ուղղված նամակում ի թիվս այլ

2 «Մշակ», 17.V.1913:

3 Տե՛ս **Լիպօվիք տր Քոնթանսօն**, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ.Պոլիս, էջ 65-74:

4 «Բիզանդիոն», 26. IV.1913:

հարցերի Պողոս Նուբարը մեկնաբանում էր իր առաքելության նպատակը: Նա շեշտում էր, որ պատվիրակությունը «ո՛չ բաժանում, ո՛չ անկախութիւն եւ ո՛չ այլ քաղաքական ինքնավարութիւն կը պահանջէ (ինչ որ ութոպիա մը պիտի ըլլար՝ նկատելով Հայաստանի աշխարհագրական պայմանները), մենք կ'պահանջենք միմիայն Բեռլինի դաշնագրին 61-րդ յօդուածով խոստացած եւ 11 մայիս 1895ի յիշատակագրով Պոլսոյ օտար դեսպաններուն մատուցած ծրագրին պարունակած բարենորոգումներուն գործադրութիւնը: Հետեւաբար մենք կ'ուզինք, օսմանցի մնալով հանդերձ վարչական լուրջ բարենորոգումներ, որոնց գործադրութիւնը դիւրին ըլլայ եւ երաշխաւորէ համազգային հակակշռով մը: Պէտք կ'զգամ շեշտելու, որ այս բարենորոգումները ի գործ պիտի դրուին թէ՛ մուսուլման եւ թէ՛ քրիստոնեայ ժողովուրդներուն ի նպաստ[5]»:

1913 թ հունիսի 1-ին Փարիզում Ֆրանսիայի Ասիական ընկերության նախաձեռնությամբ եւ ազգային պատվիրակության ջանքերով տեղի ունեցավ Եւրոպայի հայկական կոմիտեների երկրորդ խոշոր համաժողովը: Այս միջոցառման աշխատանքները ղեկավարեց ու խորհրդաժողովում նախագահեց Ասիական կոմիտեի հայկական բաժնի ղեկավար գեներալ Լակրուան:

Փարիզի համաժողովում ընդարձակ ելույթներով հանդես եկան ֆրանսիացի հայասեր, հայտնի արեւելագետ Ռընե Պինոն եւ Պողոս Նուբար փաշան: Իր ելույթում Ռ. Պինոն նշեց, որ Հայկական հարցը դարձել է Եւրոպայի խաղաղության համար անհրաժեշտ պայման, եւ տերություններն այժմ պետք է տան դրա վերջնական լուծումը: Հակառակ դեպքում Օսմանյան կայսրությունում տերությունների շահերն այնքան են սրված, որ հայկական նահանգներում ապստամբություն ծագելու դեպքում պատերազմն անխուսափելի կդառնա: Ուստի այս պայթյունավտանգ օջախը մարելու լավագույն միջոցը եւրոպական վերահսկողությամբ հայկական խոստացված բարենորոգումների իրագործումն է[6]:

Պողոս Նուբար փաշայի ելույթը նվիրված էր հայկական բարենորոգումների բնույթին եւ անհրաժեշտությանը: Նա շեշտեց, որ իր գլխավորած պատվիրակությունը չի ձգտում Արեւմտյան Հայաստանի ինքնավարությանն ու անկախությանը, այլ պարզապես ցանկանում է բարենորոգումների միջոցով տանելի պայմաններ ստեղծել հայկական նահանգներում: Նրա կարծիքով հայկական բարենորոգումները միայն անունով են հայկական: Իրականում դրանց կիրառումը օգտակար կլինի նաեւ այլազգի ու այլադավան մյուս ժողովուրդների համար, քանի որ «կարելի չէ ընդունիլ թէ երկրամասի մը մէջ ապահովութիւնը, արդարութիւնն ու տնտեսական բարգաւաճումը բնակչութեան մէկ մասին օգտակար ըլլայ ի վնաս միւս մասերուն»[7]:

Հակիրճ շարադրելով Հայկական հարցի պատմությունը, Պողոս Նուբարն ապացուցում էր, որ հայկական բարենորոգումների պահանջն ունի միջազգային իրավական հիմքեր: Դրանց կիրառման գլխավոր պայմանը եւրոպական վերահսկողությունն է, առանց որի թուրքական կառավարությունն անկարող է զսպել հայկական նահանգներում տեղի ունեցող զեղծումներն ու ոճիրները: Տերությունների միջոցով իրականացվող իրական ու

---

5 ՀՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.34, թ.31:

6 «Տե՛ս Մշակ», 9. VI.1913:

7 **Ե. Օտեան,** Պողոս փաշա Նուպար (կենսագրական նոթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 66:

ազդեցիկ վերահսկողությունը թույլ կտար «հսկել որպէս զի տեղական պաշտօնեաները, որոնք բարենորոգումները իրագործելու պաշտօն ունին, զանոնք ճշմարտապէս գործադրեն, առանց տկարացումի, առանց կողմնակցութեան, առանց ի դերեւ հանելու օրէնքին գործադրութիւնը»[8]: Պողոս Նուբարն իր լիակատար համերաշխությունն էր հայտնում Ֆրանսիայի նշանավոր հայասեր Վիկտոր Բերարի հայկական բարենորոգումների առթիվ առաջադրված բանաձեւին՝ «Օսմանեան բարենորոգում՝ եւրոպական հսկողութեամբ, ազդեցիկ բարենորոգում, իրական հսկողութեամբ: Այս բանաձեւէն դուրս՝ ապագայի ապահովութիւն չկայ ոչ Հայ ազգին համար եւ ո՛չ ալ Ասիոյ մէջ թրքական վեհապետութեան համար»[9]: Փարիզի համաժողովը մեծ նշանակություն ունեցավ ֆրանսիական հասարակական-քաղաքական շրջաններում հայկական պահանջների մասին անաչառ պատկերացում կազմելու գործում: Փարիզի համաժողովի ավարտից անմիջապես հետո, հունիսի 5-ին Պողոս Նուբարն ընդհարձակ նամակով դիմեց “L’ homme Libre” թերթի խմբագրապետին, որտեղ մանրամասնեց համաժողովում իր հնչեցրած տեսակետները[10]:

Ռուսական կառավարությունը Գեորգ Ե Կաթողիկոսի միջոցով ձգտում էր ազգային պատվիրակության գործունեությունը դնել իրեն ձեռնտու հունի մեջ, որպեսզի առանց իր իմացության եւ համաձայնության պատվիրակությունը որեւէ չնախատեսված քայլ չաներ: Այսուհանդերձ Պողոս Նուբար փաշան հաճախ շեղվում էր ռուսական դիվանագիտության նախանշած ուղուց: Ազգային պատվիրակության կատարած մի շարք գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պողոս Նուբար փաշան հաճախ ունեցել է ինքնուրույն մոտեցում եւ գործել է անձնական նախաձեռնությամբ:

1913 թ. հունվարի սկզբներին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե Սուրենյանցը ազգային պատվիրակությանն ուղարկեց հրահանգներ, որոնք պետք է գործողության ուղեցույց լինեին վերջինիս համար: Նրանցում մատնանշվում էր թուրքական կառավարության խոստումներին չհավատալու ու նրա հետ բանակցություններ չվարելու անհրաժեշտությունը: Կաթողիկոսը շեշտում էր, որ թուրքական կառավարության բոլոր քայլերն ունեն մեկ նպատակ՝ մոլորեցնել եւրոպական հասարակական կարծիքը, «մասամբ էլ, դժբախտաբար, դյուրահաւատ հայերին, եւ այսպիսով խուսափել եւրոպական պետութեանց (յատկապէս Ռուսաստանի) միջամտութիւնից»[11]: Սակայն Պողոս Նուբար փաշան գտնում էր, որ եւրոպական ոչ մի պետություն, այդ թվում եւ Ռուսաստանը, չի կարող բարենորոգումներ պարտադրել թուրքական կառավարությանը: Հետեւաբար բարենորոգումների ցանկացած ծրագիր, եթե գործադրության նպատակ ունի, ապա պետք է ստանա Բ. Դռան հավանությունը: Հակառակ դեպքում, խզելով հարաբերությունները, հայերը վտանգում էին բարենորոգումների կիրառումը: Առանց այն էլ Հայկական հարցի արծարծումը հղի էր բազմազան վտանգներով ու մեծ հանդգնություն էր պահանջում: Ճիշտ չէր լինի արհամարհել հնարավոր բոլոր վտանգները ու այրել նահանջի բոլոր կամուրջները: Հայկական հարցի միջազգայնացումն արեւմտահայության համար ողբերգական հետեւանքներ էր ունեցել,

8 Անդ, էջ 68:
9 Անդ, էջ 69:
10 Տե՛ս անդ, էջ 78-72:
11 ՀՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.19, թ.9:

քանի որ պերությունները, Հայկական հարցն իրենց շահերին ծառայեցնելուց հետո մի կողմ էին նետել՝ իբրեւ հնամաշ ձեռնոց: Իսկ լքված արեւմտահայությունն ընկել էր ավելի վատթար կացության մեջ եւ զոհ դարձել թուրքական վրեժխնդրությանը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ազգային պատվիրակությունը 1912-14թթ. ընթացքում կապերը չխզեց ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ բարենորոգումների օգտին հանդես եկող արտասահման վտարանդված թուրք հասարակական-քաղաքական շրջանների հետ: Թուրքական կառավարության հետ բանակցություններն ընթանում էին Փարիզի թուրքական դեսպան Ռիֆաթ փաշայի միջոցով: Թուրքական կառավարությունն ազգային պատվիրակությանը ձգտում էր համոզել, որպեսզի վերջինս հրաժարվի եվրոպական երկրներին դիմելուց, հավաստելով, թե թուրքական կառավարությունը մտադիր է իրագործել բարենորոգումներ առանց օտար միջամտության: Ռիֆաթ փաշայի հետ հանդիպումներից մեկի ժամանակ Պողոս Նուբար փաշան հայտնեց, որ ազգային պատվիրակության գործունեության հիմնական նպատակը բարենորոգումների իրագործման համար անհրաժեշտ երաշխիքների ձեռքբերումն է: Թուրքական դեսպանը հարցրեց, թե «կարելի չէ՞ր բարենորոգումները մենք մեզի - en famille - գործադրել, առանց անոր խառնելու օտար պետութիւնները, փաշան պատասխանեց, թէ ինք հաւնած էր զբաղիլ իր հայրենակիցներուն պահանջներովը միմիայն այն պայմանով, որ անոնք հիմնուէին հաստատուն կռուանի մը եւ իրաւունքներու վրայ, որոնք ձեռք բերուած են ո՛չ միայն Թուրքիոյ, այլ միանգամայն պետութեանց յանձնառութիւններովը»[12]: Պողոս Նուբարը համոզված էր, որ բարենորոգումների թուրքական ծրագրերը, ինչպես վկայում է պատմական փորձը, առանց վերահսկողության երբեք չեն գործադրվում: Հետեւաբար առանց վերահսկողության չկա բարենորոգում:

Հետագայում Պողոս Նուբար փաշան սկսում է ավելի զուսպ վերաբերվել թուրքական կառավարությանը: Պահպանելով զգուշավորությունը՝ նա հայկական բարենորոգումների իր կազմած նախագիծը նախ եւ առաջ ներկայացնում է Ռիֆաթ փաշային, որն էլ, առերեւս օգտակար ու գործնական գնահատելով կատարված աշխատանքը, ներկայացնում է Բ. Դռան հավանությանը[13]:

Հարաբերությունները համեմատաբար ավելի կարճատեւ եղան թուրքական հասարակական-քաղաքական շրջանների հետ, որովհետեւ, տեղեկանալով այս մասին, երիտթուրքական մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց: Պողոս Նուբար փաշան մեղադրվեց թուրք վտարանդիական շրջանների, հատկապես իր բարենորոգչական գաղափարներով հայտնի Շերիֆ փաշայի հետ կապեր ունենալու, հետեւաբար օսմանյան կայսրության ներքին գործերին եւ կուսակցական վեճերին միջամտելու մեջ: «Ժամանակ» թերթին ուղղված հերքման մեջ Պողոս Նուբար փաշան նշում էր, որ ազգային պատվիրակությունը զբաղվում է Բեռլինի պայմանագրով ամրագրված հայկական բարենորոգումների գործադրման պահանջով, հետեւաբար Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու մասին խոսք անգամ լինել չի կարող: Ինչ վերաբերում է Շերիֆ փաշային, ապա նա հանդես է գալիս ամբողջ կայսրության բարենորոգմամբ. ուստի կողմնակից էր նաեւ հայկական

12 «Բիւզանդիոն», 17.I.1913:

13 Տե՛ս «Ժամանակ», 27. V.1913:

բարենորոգումներին: Հետևաբար իր և Շերիֆ փաշայի հարաբերություններում զարմանալի ոչինչ չկար[14]: Այնուամենայնիվ Պողոս Նուբար փաշան ստիպված էր դադարեցնել, իսկ միգուցե անլեգալացնել իր կապերը թուրքական վերաբանդիական շրջանների հետ:

Թեև ռուսական դիվանագիտությունը դեմ էր, որ ազգային պատվիրակությունը պաշտոնական դիմումներ ներկայացնի տերություններին և այդ մասին բառացիորեն զգուշացրել էր Գևորգ Ե Կաթողիկոսին, այնուամենայնիվ 1913 թ. ընթացքում Պողոս Նուբար փաշան տարբեր առիթներով մի քանի անգամ հանդես եկավ եվրոպական դիվանագիտական աշխարհին ուղղված պաշտոնական հուշագրերով: Դրանցում ազգային պատվիրակությունը ներկայացնում էր Հայկական հարցի ամփոփ պատմությունը և տերությունների ուշադրությունն էր հրավիրում հայկական բարենորոգումների այս կամ այն խնդրի վրա: Այդ հուշագրերից առաջինը հրապարակվեց 1913 թ. փետրվարի 27-ին և վերնագրված էր՝ «Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և հայկական պահանջները»: Այս հուշագրի համար առիթ էր ծառայել երիտթուրքական կառավարության ներկայացրած բարենորոգումների նախագիծը, որը պատմության մեջ հայտնի է ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյի անունով: Դեռևս 1912 թ. դեկտեմբերին, երբ Կ. Պոլսում իշխանության գլուխ էր «Հուրիեթ վե Իթթիլաֆ» («Ազատություն և Համաձայնություն») կուսակցությունը, անհանգստանալով Հայկական հարցի նկատմամբ ռուսական կառավարության բարյացակամ դիրքորոշումից և հայկական շրջանների եռանդուն ջանքերից, սկսեց քննարկել 21 հոդվածից բաղկացած հայկական բարենորոգումների մի ծրագիր[15]: Ռեշիդ բեյի ծրագիրը ոչ մի կերպ չէր կարելի հայկական անվանել, քանի որ այն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի ոչ թե վեց, այլ չորս վիլայեթները և նրանում ոչ մի տեղ հիշատակված չէր Հայաստան անվանումը: Ռեշիդ բեյի ծրագրում չկար ամենակարևորը՝ բարենորոգումների կիրառման նկատմամբ կայուն երաշխիքներով մշտական հսկողությունը: Թեև վարչապետ Քյամիլ փաշան, արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյանը, ֆինանսների նախարար Աբդուրրահման բեյը և Ռեշիդ բեյը հայկական շրջանների հետ հանդիպումների ժամանակ (նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյան, մեծահարուստ վաճառական Պատրիկ Գյուլբենկյան, բժիշկ Նազարեթ Տաղավարյան և թուրքական «Սապահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյան) խոստացան բարենորոգումները տարածել նաև Էրզրումի ու Սվազի վիլայեթների վրա, հողային բարեփոխումների համար հատկացնել 200.000 ոսկի և այլն, սակայն ծրագրում ամենաէականի՝ վերահսկողության երաշխիքների բացակայությունը անվստահություն էր ծնում: Ռուսական «Московская газета» թերթը նշում էր, որ Ռեշիդ բեյի ծրագիրը վստահության արժանի չէ, «քանզի Բ. Դուռը հաճախ է տվել այդպիսի խոստումներ, բայց հենց պահանջվել է կիրառել դրանք, ապա գտնվել են «կողմնակի պարագաներ» խոստումների իրագործումը արգելակելու համար»[16]:

Պատահական չէ, որ իթթիլաֆական կառավարությունը զուգահեռաբար սկսեց քննարկել թուրքական պառլամենտի քուրդ պատգամավոր Աբդուլ Քադերի քրդական

14 Տե՛ս «Մշակ», 4.VII.1913:

15 Տե՛ս Архив внешний политики Российской империи (այսուհետև՝ АВПРИ) ф. Посольство в Константинополе, оп.517/2. д.3728, л.28-30:

16 "Московская газета", 27.XII.1912.

ինքնավարություն կազմակերպելու նախագիծը, որը նրան հրապուրում էր, առաջին հերթին, իր հակահայկական ուղղվածության պատճառով: Քյամիլ փաշայի և Աբդուլ Քադերի հանդիպումները ցույց տվեցին, որ իթթիլաֆական կառավարությունը լրջորեն մտադիր է քրդական շարժումն օգտագործել հայերի դեմ: Աբդուլ Քադերի նախագծում Քրդստանի մեջ ներառված էին հայկական վիլայեթները: Քադերը ճգնում էր ապացուցել, որ Քրդստանի ինքնվարությունը եվրոպական տերություններին թույլ չի տա ստեղծել ինքնավար Հայաստան: Աբդուլ Քադերը հայտարարեց. «Տվեք մեզ ինքնավարություն, որպեսզի խուսափեք հայկական հարցից...»[17]:

Բայց ո՛չ Ռեշիդ բեյի և ո՛չ Աբդուլ Քադերի ծրագրերին վիճակված չէր իրականանալ: 1913 թ. հունվարի 10-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Թալեաթ և Էնվեր բեյերի գլխավորությամբ 200 հոգուց բաղկացած զինված ջոկատը ներխուժեց Բ. Դուռ և Քյամիլ փաշային ստիպեց հրաժարական տալ: Հունվարի 11-ին վարչապետ հռչակվեց Մահմուդ Շեւքեթ փաշան: Կրկին իշխանության գլուխ անցած իթթիհատականները ժխտական դիրք բռնեցին Հայկական հարցի նկատմամբ:

Փետրվարի 27-ի հուշագրով Պողոս Նուբար փաշան եվրոպական դիվանագիտական աշխարհին հիշեցնում էր, որ հայկական բարենորոգումների պահանջն ամրագրված է 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով և տերությունների 1895 թ. մայիսյան ծրագրով, ուստի այն չի կարող Օսմանյան կայսրության ներքին հարցը լինել: Ինչ վերաբերում է Ռեշիդ բեյի ծրագրին, ապա Պողոս Նուբարը տերությունների ուշադրությունն էր հրավիրում այն փաստի վրա, որ թուրքական կառավարության պատրաստած ծրագիրը «կը ջնջէ Պետութիւններու հակակշիռը եւ ասով կը ջնջէ նաեւ տեւականութեան եւ ազդեցիկութեան ամէն երաշխաւորութիւն»[18]:

1913 թ. մարտի 22-ին հրապարակվեց ազգային պատվիրակության երկրորդ հուշագիրը «Հայկական բարենորոգումները և ասիական Տաճկաստանի ամբողջությունը» վերնագրով: Նրանում Պողոս Նուբար փաշան եվրոպական դիվանագիտական աշխարհին հավաստիացնում էր, որ Օսմանյան կայսրության ամբողջականությունը մեծապես պայմանավորված է իր արևելյան նահանգների տնտեսական զարգացմամբ, որի շնորհիվ երկրում կչեզոքացվեն խռովության բոլոր շարժառիթները: Իսկ երիտթուրքերը տնտեսական առաջընթացի կարող են հասնել միայն բարենորոգումների միջոցով: Պողոս Նուբար փաշան վստահեցնում էր, որ երիտթուրքական կառավարությունն արդեն ըմբռնել է հայկական բարենորոգումների կարևորությունը Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու գործում և հայկական շրջաններին առաջարկել է բարենորոգումներ իրագործել: Բանն այն է, որ 1913 թ. մարտին Հայկական հարցում ռուսական դիվանագիտության ակտիվությունը չեզոքացնելու նպատակով երիտթուրքերը հրաժարվեցին նախկին ժխտական վերաբերմունքից և բանակցությունների մեջ մտան Հայ հեղափոխական դաշնակություն կուսակցության ներկայացուցչների հետ: Այդ բանակցություններին իթթիհատականներից մասնակցում էին՝ Թալեաթը, Խալիլը, Միտհաթ Շյուքրին, իսկ դաշնակցականներից՝ Ակնունին, Վարդգես Սերենկյուլյանը և

17 "Новое время", 24. XII.1912.

18 **Ե. Օտեան**, նշվ. աշխ., էջ 54-55:

Արմեն Գարոն: Իթթիհատականները խոստանում էին Բալկանյան պատերազմից հետո Արևելյան Ռումելիայի բարեկարգության ծրագրի հիման վրա բարենորոգումներ անցկացնել նաև հայկական վիլայեթներում: Դրա փոխարեն հայերից պահանջում էին հրաժարվել տերություններին դիմելուց և Կ. Պոլիս հրավիրել Պողոս Նուբար փաշային[19]:

Այս իրադարձությունները Պողոս Նուբար փաշայի համար հիմք էին տվել եզրակացնելու, որ այլևս հապաղել պետք չէ և «ներկայէս աւելի նպաստաւոր ո՛չ մէկ առիթ պիտի ներկայանայ Եւրոպայի՝ պահանջելու համար հայկական բարենորոգումները»[20]:

Անշուշտ, Պողոս Նուբարը սխալվում էր, երբ կարծում էր, թե տերությունները շահագրգիռ են Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու մեջ: Ստատուս քվոն պահպանելու կարգախոսը իրականում հիմնովին կեղծ էր և օգտագործվում էր տերությունների տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Օսմանյան կայսրությունում ամրացնելու համար: Պատմության դառը դասերը վկայում էին, որ պաշտոնական Եվրոպայի վերաբերմունքը Օսմանյան կայսրության նկատմամբ միշտ էլ եղել է սեփական եսասիրական շահերի հետապնդման քաղաքականություն, իսկ Բալկանյան պատերազմի հետևանքով թուլացած Թուրքիայի երերուն կացությունը հնարավորություն էր տալիս ավելի դյուրությամբ իրագործել հիվանդ մարդու անդամահատումը[21]: Ինչպես վկայում էր Ռիգայի ռուսական փոխհյուպատոս Վ. Մաեւսկին՝ «ըստ էության եվրոպական տերությունների ամբողջ համակրանքը Արևելքի քրիստոնեաների նկատմամբ՝ զուտ պատրանք է: Եվրոպան այստեղ սադրում է միայն նրա համար, որպեսզի հասնի Թուրքիայի կազմալուծմանը»[22]: Այնուհանդերձ, Պողոս Նուբարը ձգտում էր տնտեսական ու քաղաքական շարժառիթներով Եվրոպային շահագրգռել հայկական բարենորոգումների իրագործման մեջ: Նա եվրոպական դիվանագիտական շրջաններին համոզում էր, որ հայկական բարենորոգումների իրագործումը կրկնակի օգուտ կբերի Եվրոպային: Նախ՝ «Ասիական Տաճկաստանի վիճակի բարելաւումովը Օսմանեան կայսրութեան պահանջատէր Եւրոպայի ելմտական շահերը կրկին երաշխիքներով պիտի ապահովուին», և երկրորդ՝ «կարգ ու կանոնին վերահաստատումովը եւ ամեն տեսակ դժգոհութեան եւ խռովութեան պատճառներուն վերացումովը, հողային ամբողջութեան պահպանումը... ապահովուած պիտի ըլլայ թէ ներքնապէս, եւ թէ արտաքնապէս»[23]:

Տերություններին ուղղված ազգային պատվիրակության երրորդ հուշագիրը՝ «Հայկական բարենորոգումները և խլամ բնակչությունները: Գաղթականները հայկական նահանգներուն մէջ» վերտառությամբ, հրապարակվեց 1913 թ. մայիսի 5-ին: Այս հուշագրի համար առիթ էին ծառայել Արևմտյան Հայաստանից ստացվող տեղեկություններն այն մասին, որ երիտթուրքերը սաստկացրել են իրենց հակահայ քաղաքականությունը:

Արևմտահայ աշխատավորությունը ներքին տագնապով դիմավորեց 1913 թ. գարունը, քանզի վստահ էր, որ ինչպես Աբդուլ Համիդի, նույնպես և երիտթուրքերի օրոք անգութ

19 Տե՛ս **Վ. Փափազեան,** Իմ յուշերը, հ. 2, Բէյրութ, 1952, էջ 190-197:

20 ՀՀԱԱ, ф.57, ց.5, գ.33, թ.10:

21 Տե՛ս "День", 12.VI.1913:

22 Центральный государственный военно-исторический архив Российской империи, ф.450: Турция, оп.1, д.145, л.4.

23 ՀՀԱԱ, ф.57, ց.5, գ.33, թ.9:

չարագործությունների շարքը նոր ուժով է բորբոքվելու: Եւ իրոք, երիտթուրքերը, նպատակ ունենալով խանգարել գյուղացիության գարնանային գյուղատնտեսական աշխատանքներին, ավելի սաստկացրին հայահալած քաղաքականությունը: Ըստ երիտթուրքական նյութումների, մահասփյուռ սովի ուրվականը միանալու էր ջարդի սարսափին եւ միասին կախվելու էին արեւմտահայության վրա: Բնականաբար, երիտթուրքական որոգայթները նոր որակ հաղորդեցին արեւմտահայության դժնդակ կացությանը: Գարնանը եւրոպական դիվանագիտությունը ձեռնամուխ եղավ Հայկական հարցի արծարծմանը, իսկ թուրքական մտայնությունը եզրակացրեց՝ «օսմանեան մնացած երկրները հնարաւոր է պահպանել Եւրոպայի ոտնձգութիւններից՝ հայ տարրը ոչնչացնելով»[24]: Արեւմտահայության կյանքում սկսվեց եղերական մի նոր շրջան:

1913 թ. ապրիլի 22-ին Դիարբեքիրի ֆրանսիական հյուպատոսը հայտնում էր, որ վիլայեթում ստեղծվել է լարված իրավիճակ եւ «չի բացառվում հայերի նոր կոտորածների հնարավորությունը»[25]: 1913 թ. մայիսին Բիթլիսից «Новое время» թերթի թղթակից Ա. Բերեզովսկին[26] գրում էր. «Այստեղ չկա հայ, որը վստահ լինի այն բանում, որ վաղը շուկա դուրս գալով, նա վայրագորեն խողխողված, կամ գնդակահարված չի լինի, իսկ տանը մնացած նրա կինը կամ աղջիկը՝ պատվազրկված, այստեղ չկա հայ կին կամ աղջիկ համոզված, որ իրեն ամենաողկալի ձեւով չի անարգի վայրի սրիկաների հրոսակախումբը, այստեղ չկա հայ ծնող, չկասկածող այն բանում, որ դպրոց ուղարկված իրենց զավակները կենդանի հետ կվերադառնան»[27]:

Ամեն օր Կ. Պոլսի դեսպանատներ՝ հյուպատոսներից ու փոխհյուպատոսներից, հայոց պատրիարքարան՝ թեմերի առաջնորդներից, թերթերի խմբագրություններ՝ տեղական թղթակիցներից, հասնում էին գույժեր, որոնք վկայում էին, որ Արեւմտյան Հայաստանում դրսեւորվող երեւույթները ոչ այլ ինչ էին, եթե ոչ ծրագրված կոտորածի չարագուշակ նշաններ: 1913 թ. մայիսի 18-ին Պոլսո պատրիարք Հովհաննես Արշարունու՝ Բ. Դռանը հանձնած թաքրիրում մատնանշվում էր, որ հայկական վիլայեթներում կատարվող «սպանությունները, բռնությունները, հափշտակություններն ու կողոպուտները, առանց չափազանցությունների, կրում են զանգվածային կոտորածների բնույթ»[28]:

Երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրերում կարեւոր տեղ էր գրավում հայկական վիլայեթներում մուհաջիրների (Բալկանյան առաջին պատերազմի հետեւանքով այնտեղից ներգաղթող մահմեդականներ) վերաբնակեցման քաղաքականությունը: Զգտելով հայկական վիլայեթներում ստեղծել մահմեդական տարրի գերակշռություն, երիտթուրք պարագլուխները մուհաջիրների մի մասին բնակեցնում էին Արեւմտյան Հայաստանում: Այս քաղաքականությունը հետամտում էր մի քանի նպատակ:

Հողազուրկ եւ տնազուրկ մուհաջիրները հայկական վիլայեթներում կարող էին ստանալ

24 «Նոր hոսանք», 1913, ապրիլ, թ. 2, էջ 467:

25 АВПРИ, ф. Концентярия МИД, оп.470, д.114, ст.249.

26 Երիտթուրքերը արգելում էին որեւէ օտարերկրյա թղթակցի Արեւմտյան Հայաստանում ուսումնասիրություններ կատարել: Ա. Բերեզովսկին (Տ. Օլեգին) ժամանակի եզակի հրապարակախոսներից էր, որ 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին կարողացավ լինել հայկական բոլոր վեց վիլայեթներում: Նա իր տպավորությունները շարադրեց «Անհետացող Հայաստան» ընդհանուր խորագիրը կրող հոդվածաշարում:

27 “Биржевые ведомости”, 14.V.1913.

28 АВПРИ, ф. Посольство в Константинополе, оп.517/2, д.3726, л.100.

եւ՛ մշակված հողեր, եւ՛ պարտեզի տներ: Այդպիսով թուրքական կառավարությունն առանց դժվարությունների ու ավելորդ ծախսերի ազատվում էր մուհաջիրներին նոր տներով ու աշխատանքով ապահովելու հոգսից: Սակայն հայ բնակչությունը կամովին չէր զիջում իր տունն ու տեղը: Ուստի, չսահմանափակվելով արտագաղթի հետեւանքով հայրենիքը լքած հայերի ունեցվածքի զավթումով, իթթիհատականները կամ մահվան սպառնալիքի տակ կամ բռնի վտարումներով հարկադրում էին հայերին իրենց տունն ու հողը զիջել մահմեդական գաղթականությանը: Այդ կերպ երիտթուրքական կառավարությունը հայ բնակչությանը շրջապատում էր մահմեդական մեծամասնությամբ, որը հնարավորություն էր տալիս արեւմտահայությանը անկարող դարձնել հակապետական որեւէ շարժման[29]:

Մուհաջիրների հաստատումը Արեւմտյան Հայաստանում մեծապես սրեց ազգային հարաբերությունները: Ներարկված պատերազմի պարտության ու, հետեւաբար, իրենց ներգաղթի պատճառը կայսրության քրիստոնյա բնակչությանը վերագրելու ախտահարույց մանրէով, մահմեդական այս ամբոխն իր ամբողջ վրեժխնդրությունն ուղղում էր բազմատանջ արեւմտահայության դեմ:

Մայիսի 5-ի հուշագրով Պողոս Նուբար փաշան տերություններին զգուշացնում էր, որ մուհաջիրների վերաբնակեցման քաղաքականությունը պայթունավտանգ իրավիճակ է ստեղծել Արեւմտյան Հայաստանում, եւ անհրաժեշտ է անհապաղ բարենորոգումներ կիրառել, որոնք շահավետ կլինեն ինչպես մահմեդական, նույնպես եւ քրիստոնյա բնակչության համար[30]:

Ազգային պատվիրակության չորրորդ հուշագիրը՝ վերնագրված «Հայկական բարենորոգումները եւ եւրոպական հակակշիռը», հրապարակվեց 1913 թ. հունիսի 14-ին եւ նվիրված էր հայկական բարենորոգումներում եւրոպական վերահսկողության անհրաժեշտությանը: Նրանում պատվիրակությունն ընդգծում էր, որ «անհոգութիւնը, անկարողութիւնը եւ իշխանութեան չարաչար գործածումը աւանդական են գաւառի պաշտօնէից համար»[31], իսկ կենտրոնական կառավարությունը ոչինչ չի անում ստեղծված օրհասական կացությունը գոնե փոքր-ինչ մեղմելու համար: Հետեւաբար, եւրոպական վերահսկողությունը «միակ երաշխաւորութիւնն է բարենորոգումներուն եւ անոնց կանոնաւոր եւ արդիւնաւոր կիրարկումներին»[32]:

Ազգային պատվիրակության հուշագիրն արձանագրում էր, որ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված եւրոպական վերահսկողության ձեւն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պարբերակ է հայկական բարենորոգումներն իրականացնելու համար: Եւրոպական վերահսկողությունն ազդեցիկ դարձնելու եւ բարենորոգումների գործադրումը տեղերում հսկելու համար ազգային պատվիրակությունը տերություններին առաջարկում էր ներկայացուցիչներ ունենալ, որոնք «կարենան բարենորոգմանց գործադրութեան համար կոչուող պաշտօնեաներու վրայ հսկել՝ որպէսզի իրապէս զանոնք գործադրէ, առանց թերութեան, անկողմնակալութեամբ եւ առանց օրէնքի կիրառումէն խոյս տալու»[33]:

---

29 Տե՛ս **Արամ**, Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, էջ 35:

30 Տե՛ս **Լիւտօվիք տը Քօնթանսօն**, նշվ, աշխ. էջ 61-64:

31 ՀՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.33, թ.13:

32 Անդ:

33 Անդ:

Ազգային պատվիրակությունը 1913թ. ընթացքում մի քանի հուշագրեր եւս հղեց եվրոպական դիվանագիտական աշխարհին, որոնք հիմնականում առնչվում են հայկական բարենորոգումների նախագծերին եւ դրանց կիրառման տարբերակներին:

Հայ ազգային պատվիրակությունն իր բազմաբնույթ գործունեությամբ եւ Պողոս Նուբար փաշայի եռանդուն ջանքերի շնորհիվ ծանրակշիռ ներդրում ունեցավ եվրոպական հասարակական կարծիքը հօգուտ Հայ դատի տրամադրելու գործում: Ազգային պատվիրակության ջանքերը տվեցին նաեւ ցանկալի արդյունքներ: Մասնավորապես 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքումը մեծապես պայմանավորված էր ոչ միայն ռուսաց դիվանագիտության, այլեւ ազգային պատվիրակության տքնաջան աշխատանքով: